workers united

An SEIU Affiliate

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ- SEIU-Ի ԳԼՈԲԱԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱԳՈՒՍՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ հագուստի արդյունաբերությունն առավել համաշխարհայնացված արդյունաբերության ճյուղերից մեկն է, և նախորդ տասնամյակներում հագուստի արտադրությունը մեծ ծավալով դուրս է մղվել Միացյալ Նահանգներից և Կանադայից՝ պատճառելով միլիոնավոր աշխատատեղերի կորուստ, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ ԱՄՆ-ում և Կանադայում հագուստի արդյունաբերության մնացյալ աշխատատեղերն առկա են բաշխման և մանրածախ առևտրի հատվածներում, մինչդեռ Ասիայի, Լատինական ամերիկայի և Աֆրիկայի չափազանց աղքատ պետություններում հագուստի արտադրությունը բնորոշվել է անհարգալից, մարդկանց անօրինականորեն շահագործող աշխատանքային պայմաններով, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Միավորված աշխատողներ SEIU-ն տասնամյակներ շարունակ ներկայացրել է հագուստի արտադրության հարյուր հազարավոր աշխատողների, և եղել է «ԻնդասթրիՕլ» գլոբալ միության և դրա իրավանախորդ ITGLWF կազմակերպության առաջատար համակից կազմակերպություն, ներկայացրել է խոշոր բրենդային և մանրածախ առևտրի ընկերությունների բաշխման աշխատողների և վերջին տարիներին հաջողությամբ հիմնել է հագուստի բաշխման մի քանի կենտրոն, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Միավորված աշխատողներ-SEIU կազմակերպությունը շարունակում է հավատարիմ մնալ իր իրավանախորդ Միությունների՝ «Կանանց միջազգային հագուստի աշխատողների միության» և «Հագուստի և տեքստիլի միավորված աշխատողների միության» առաքելությանը՝ ընդունելու հագուստի արդյունաբերության աշխատողներին Հյուսիսային Ամերիկայի մեր Միությունում և աշխարհի այլ վայրերում գտնվող քույր Միություններում, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ ինքնակազմակերպման ձգտող հագուստի բաշխման կենտրոններին աջակցելու կարևոր ռազմավարություններից մեկն է հագուստ արտադրող երկրների միություններին համերաշխության աջակցության ցուցաբերումը, որոնց մեծամասնությունը հանդիսանում են «ԻնդաստրիՕլ» գլոբալ միության համակից կազմակերպություններ, և որոնք անհարգալից և մարդկանց անօրինականորեն շահագործող աշխատանքային պայմաններին դիմակայելու իրենց պայքարում բացահայտում են այդ պայմանները և բրենդային ու մանրածախ առևտրի ընկերությունների հանցակցությունը, որոնց հագուստը նրաք պատրաստում են, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ «ԻնդաստրիՕլ» գլոբալ միության աշխատողներին և նրանց միություններին Միավորված աշխատողներ-SEIU-ի կողմից ցուցաբերվող համերաշխության աջակցությունը կարևոր քայլ է համընդհանուր ռազմավարության

ստեղծման ուղղությամբ՝ կազմակերպելու հագուստի բրենդների և մանրավաճառների մատակարարման և բաշխման շղթաներ, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Կանադայի իրենց տարածքներում, և

ՀԵՏԵՎԱԲԱՐ, ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՎԵՑ ԱՌ ԱՅՆ, Որ Միավորված աշխատողներ- SEIU-ն առաջնահերթություն կտա «ԻնդաստրիՕլ» գլոբալ միության և նրա համակից կազմակերպությունների կողմից կազմակերպվող համաշխարհային գլոբալ արշավները խթանելու և դրանց մասնակցելու ջանքերին՝ կազմակերպելու հագուստի խոշոր բրենդների և մանրածախ առևտրի մատակարարման և բաշխման շղթաներ, այդ թվում՝ ԱՄՆ-ում և Կանադայում:

22 Էս. 22-րդ փողոց, Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա, 19103, հեռախոսահամար՝ Ֆաքս՝ 646-448-6414 215-575-9065

www.workersunited.org

7 հուլիսի, 2020թ.